ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 30,31-Ն,32-Ա ԵՎ 33ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 31-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ն» (նորմատիվ) տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա: Բացի այդ, որոշման բովանդակության մեջ «գիտություն» բառից հետո անհրաժեշտ է գրառել «համաձայն հավելվածի» բառերը:

Որոշմամբ հաստատված հավելվածի եկամտային մասում՝ «Տեղական տուրք» տողի «3-րդ եռամսյակ» և «Կատարման տոկոս» սյուններում նշված «217.0» և «74.2» թվերը համապատասխանաբար փոխարինել «185.0» և «83.8» թվերով, «Արվեստի դպրոցներ ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար» տողի «Նախատեսված» և «Ճշտված» սյուններում նշված «400.0» թիվը՝ «500.0» թվով, «Ընդամենը սեփական եկամուտներ» տողի «Նախատեսված», «Ճշտված» և «3-րդ եռամսյակ» սյուններում նշված «10436.8», «10436.8» և «7693.6» թվերը՝ «11268.1», «11268.1» և «7661.6» թվերով, «Դոտացիա» տողի «Նախատեսված» և «Ճշտված» սյուններում նշված «25380.2» թիվը՝ «26221.9» թվով, «ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ» տողի «Նախատեսված», «Ճշտված» և «3-րդ եռամսյակ» սյուններում նշված «35817.0», «35817.0» և «27360.0» թվերը՝ «37490.0», «37426.0» և «27328.0» թվերով: Բացի այդ, հավելվածում «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշեն համայնքի 2019 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարողականը ծախսային մասով», ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ներկայացված չեն:

Թիվ 32-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ոչ թե 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, այլ՝ 10-րդ հոդվածի 11-րդ մասին: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշեն համայնքի 2017 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 20-Ն որոշումը հղում կատարելիս, անհրաժեշտ է նշել որոշմամբ սահմանված կարգի համապատասխան կետի, ենթակետի կամ պարբերության համարը:

Որոշմամբ Մեղրաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի սոցիալական արտոնություններ բաժնից 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ դրամական աջակցություն է հատկացվել Ազատ Նազարեթյանին, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշեն համայնքի բնակիչ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում: Որոշմամբ խախտվել է ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշեն համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 20-Ն որոշմամբ սահմանված կարգի 16-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող անձանց:

Թիվ 33 որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին կատարված հղումը սխալ է, քանի որ այն

սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում: Հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասին:

Որոշումներում տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը և կրճատ գրառված բառերն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

Որոշումները մարզպետարան առաքվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
19.11.2019թ.